

սիպպոսիններուն վրայ նոյնը չի տեսներ : Յայտնի է ուրեմն թէ Հռովմայեցւոց մեծամասնութիւնն ալ այս վերջնոյս կողմն էր . նոյն բանը կրնանք գուրցել նաև նորոց համար . այսօրուան օրս ալ մարդկանց մեծամասնութիւնը՝ գաղափարակից է Սիկիոնի արձանագործին , և հաւասարապէս կրկին կատարեալ անձանց մէջ՝ միշտ բարձրագոյնը կ'ընտրէ :

Գերմանական ժողովրդական առած մը՝ բարձրահասակ անձինք բազմայարկ տանց կը նմանեցընէ , յորս որշափ աւելի բարձրանաս՝ յարկերն այնշափ ևս կ'անշքմանն . Սակայն փորձով ապացուցեալ ճշմարտութիւն մ'է որ հանճարեղ անձինք՝ շատ աւելի յաճախ կը հանդիպին միջին հասակէն իսկ վար եղողներուն մէջ . Պիզմարք և Մոլթքէ բացառութիւն պէտք է համարուին . իմաստափիրաց ոչ մին բարձրահասակ էր : Նշանաւոր զօրավարք և ռազմագէտը գրեթէ ամէնն ալ կարճահասակ էին . սկսեալ յԱտափղասայ և ի Լէնկթիմուրէ մինչև 'ի մեծն Փրեդերիկոս , դուքսն Ռւելինկդըն , Նէլսըն և Նարոլէնն :

Նշանաւոր բանափիրաց և արուեստագիտաց դասուն մէջ բազմաթիւ են կարճահասակներն . ինչպէս Եղովրոս , կոնֆուկիոս , Որատիոս , Միլտոն , Տրայալն , Տիգենս , Մաքուլէյ , Բոր , Սուիֆտ , Շիլեր , Ռվանտ , Միքէլանձէլօ , Ռափայէլ և Դիւրներ . Մեծամեծ յեղափոխիչք , Լուտեր , Կալվին , Մէլանդոն , Երազմոս ամէնն ալ կարճահասակ էին . օրինակները կրնանք գեռ շարել , չըսեմ յանհունս՝ բայց յայտնի է թէ քանի մը էջ . այս ալ ծանօթ է որ առասպելաց , վէպերու և ամէն ազգաց պատմութեանց մէջ՝ կարճահասակ անձանց քաջութիւն և գերազանցութիւնն հռչակուած է ընդդէմ բարձրահասակներու .

## ԲԱՐԻԶՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՏՈՒՆԸ

**Պ** Գաղղիա Արքունական Գրատան մը առաջին դաղափարն և ծրագիրն Ս . Լուգովիկոսի ժամանակէն կը սկսի (1226-1270) . Մինչև նոյն ատեն երկրին մէջ գտնուած գրեանք՝ բազմաթիւ

վանորէից մէջ կը պահուէին. այս գրոց մեծամասնութիւնը կը կազմէին Ս. Գիլք, Ս. Հարց գրուածք, կանոնական գրութիւնք, պատարագամատոյցք և մաշտոցք, և սակաւաթիւ լատին և յոյն հեղինակաց ձեռագիրք: Առօրն Լուդովիկոս այս ամէն գրքերն օրինակել տուաւ, և 'ի Բարիզ առանձին տեղ մը հաւաքեց զանոնք: բայց իւր մահուրնէն վերջը՝ այս գրեանք ալ ցրուեցան դարձեալ յայլ և այլ մենաստանս, որոց կտակեր էր թագաւորը նախընթացաբար: Յ'Ազգային Գրատանն այս ժամանակէս միայն պատարագամատոյց մը մնացած է՝ 83 մեծ և գրեթէ 100 փոքր զարդանկարուք:

Կարողոս Ե. առաջինն եղաւ որ բո՛ւն գրատոնն մը հաստատեց. լուվիրի աշտարակաց միոյն մէջ 1200 հատոր ժողվեց. որոց մեծ մասը պատկերազարդ պատարագամատոյցներ և այլ կրօնական գրուածներ, սրբոց վարքեր և առապելախտոն պատմութիւններ, հմայութեան և աստեղագիտութեան վերբերեալ գրքեր էին: Նոյն գրատան քարտուղարն ժիլ Մալէ՛ ցանկ մը շննեց, և որպէս զի գրասէրք յո և իցէ ժամու օգուտ կարենան քաղել այս գրատոննէն՝ միշտ արծաթեայ կանթեղ մը կը վառուէր անդ: Սակայն այս թանկագին և կարեոր հաւաքումը ցրուեցաւ դարձեալ կարողոս Զի ժամանակ, և այսօրուան օրս միայն հինգ կամ վեց հատոր մնացեր են անկէ. իսկ թագաւորին եղրարքը, այսինքն ա՛ Անժուի և Պէրըի դքսերն՝ իրենց սեպհական դղեկաց մէջ մեծ գրատուններ հաստատեցին, որոց գրեանք յետոյ ճոխացուցին թագաւորին Մատենադարանը:

Կարողոս Է. և լուդովիկոս Ժ. շատ գրասէր թագաւորներ չեղան. կարողոս Ը. ընդհակառակն բերաւ իրեն հետ իտալիայէն բազմաթիւ յարգի գրչագիրներ, և լուդովիկոս Ժ. իւր գրատունն 'ի Պլուա փոխադրեց, աւելցնելով վրան Սփորցա և ֆաւիոյ Վիկոնդի ընտանեաց մատենադարանաց գրեանք, Փետրարքայի և լուի տը Պրիւժի, որ ժամանակին ամենէն աւելի հարուստ գրատանց մին էր, թանկագին ձեռագրերով. իւր թագաւորութեան ժամանակ՝ Յովհաննէս Պուրտիշոն շարադրեց իւր գլուխ գործոցն, որ ցարդ կը պահուի յԱզգային Մատենադարանին, այսինքն Պրըթայնի Աննա թագուհոյն համար շննած հոչակաւոր ժամանակարգութեան գիրքը:

Տպագրութեան գիւտը՝ մատենադարանաց ամենամեծ զարգացումն պատճառեց. և յիրաւի կը հաշուեն որ գիւտին տարիէն սկսեալ ցամ 1500 յԵւրոպա հինգ միլիոն հատոր գիրք տպագրուեցաւ:

1544ին Փրանկիսկոս Ա. 'ի Ֆոնդէնպլոյ փոխագրել տուաւ

Յովհաննէս Բարեսրտին և կարողոս տ' Անկուլէմի հաւաքած գրեանքն. որոց վրայ յետոյ յաւելան Պլուտ և Մուլէն դղեկաց մէջ գտնուած հաւաքմունք : Այն ժամանակէն սկսեալ՝ թագաւորին մատենադարանը գագրեցաւ իրեն բացարձակ ստացուածքն ըլլալէ . և թէպէտ գեռ ևս իրբ հասարակաց հաստատութիւն մը չէր համարուեր , սակայն ամէն աստիճանէ ուսումնասէլք անդ կ'ընդունուէին :

Հենրիկոս Բ. (1547—1559) մասնաւոր սէր մ'ունենալով փառակազմ գրեանց՝ 800 հատորէ աւելի կազմել տուաւ , յորոց ամէնն ալ իրբ օրինակ կրնան համարուիլ վայելցութեան և ընտիր ճաշակի . ընդհակառակն իրեն յաջորդող երեք թագաւորներն մատենադարանին վրայ բնաւ սէր չունեցան , ուստի կարողու . թի ժամանակ 'ի ֆոնդէնալոյէ փոխադրուեցաւ 'ի Բարիկ : Լուգովիկոս ԺԴ. Փիլիպպոս Նիւրոյ Շարդրի եպիսկոպոսէն 500 հատոր գնեց . և Մատենադարանն ատենը կը պարոնակէր 16, 746 հատոր . այն ժամանակ բուն գրատունէն բաժնեցին թագաւորին ուսումնասենեակը , որ իրբ իրեն առանձին սեպ-հական ստացուածք պահուեցաւ 'ի Լուգր , մինչդեռ մեծ գրատունն հաստատուեցաւ Լա Հարբ փողոցը : Թագաւորին առանձին գրատունը՝ քիչ վերջը « Լուգրի Մատենադարան » կոչուեցաւ , զոր յետոյ յեղափոխութեան ժամանակ այրեցին , և քանի մը կտոր միայն կրցան ազատել : Լուգովիկոս ԺԴ. գրոց կարեւոր գնումներ կատարեց , այնպէս որ մատենից թիւը 70, 000 հատորի բարձրացուց , և Քոլպէր 1666ին Վիվիէն փողոցին մէջ երկու տուն գնեց զանոնք զետեղելու համար :

Ութեասաներադ գարուն թէ ձեռագրաց և թէ գրոց թիւն շատ աճեցաւ . օրինակի համար , 1732ին Քոլպէրի հաւաքսւմը գնուեցաւ , որ 6000 ձեռագրէ աւելի կը բրվանդակէր . տասնուհինգ տարի առաջ կարողոս ա' Օզիէ Մարդէն մատենադարանին նուիրեր էր իւր « Ճիւղագրական գրատունը » որ շատ հարուստ հաւաքում մ'էր : Օրլէանի դքսին տեղը փոխադրուեցաւ , որ առաջ Մազարէն ծիրանաւորին ստացուածն էր :

Մինչև այն ատեն գրատունը հարստացեր էր գնմամր , ընծաներով և փոխանակութեամբ . ընդհակառակն յեղափոխութեան ժամանակ՝ վանօրէից և այլ կրօնական հաստատութեանց մատենադարանաց յափշտակութեամբ մեծապէս հարստացաւ . 1789ին : Սակայն ցաւալի է ըսել որ այս գանձուց փոխադրութեան ժամանակ տգէտ և գրդուեալ ուամիկը՝ բարբարոսական կերպով՝ ամենէն գեղեցիկ կազմերը փճացուց , ամենէն աւելի յարգի ձե-

ռագիրները պատրուտեց, այնպէս որ Դաշնակցութիւնը 1794ին ստիպուեցաւ օրէնքը մը հրատարակել գրոց և արուեստական գործոց ջնջումը արգիլելու համար: Երկու տարի առաջ՝ միայն մէկ անգամով, վանտումի հրավարակին մէջ, 2000էն աւելի ձեւ ռագիրներ և յիշատակարաններ այրած էին:

Ներկայ գարուս մէջ՝ մեծ գրատան կից Շէրէն և տ' Օղիէ երկու սենեակներ աւելցան, և Լապտուայենի հաւաքումը, 1000, 000 հատոր, որ գլխաւորաբար գաղղիական յեղափոխութեան վրայ կը խօսին, 2000 հատոր Վոլգէրի և 1500 հատոր Մոնղէյնի վրայ: Իսկ վերջի ասրիներուս ամենէն աւելի թանկագին գնմանց մին է Աշպուրնամի հաւաքումը:

1855ին Ազգային մաստենադարանը ընդ գրեանս և փոքր հրատարակութիւնս գրեթէ երկու միլիոն հատոր ունէր. Ներկայիս միայն գրոց թիւը գրեթէ նոյն չափ է, և ամէն տարի 50, 000 հատոր կ'աւելնայ:

## ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

### Ց Ա Խ Գ Ո Պ Ա

(Տես յ'էջ 338)

### Փ. Մ. ՊՐՈՍԵ

25. Հայաստանի հին պատմութիւն ըստ սրբագիր և բներաբանդակ տառից. Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hieroglyphiques et cunéiformes. Բնթերցեալ յ' 18 ապրիլ 1871:

26. Երկու բներածն արձանագրութեանց վրայ՝ զոր Ռուս-Հայաստանի մէջ գուա Գասթնէր: Տեղեկագիր Պրոսէ և Գիննիք պարոնայց, հանդերձ Լէրլի մէկ յիշատակագրուլ. Notice sur deux inscriptions cunéiformes, découvertes par M. Kästner dans l'Arménie russe. Rapport de MM.